

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱ
ՀՐԱՉՅԱ ԱՃԱՌՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԼԵԶՎԻ ԻՆՍՏԻՏՈՒՏ**

ՀԱԿՈՒՑԱՆ ԱՐՄԱՆ ԵՂԻՇԻ

«ԲԱԲԵԼՈՆ» ՀԱՅԱԼԵԶՈՒ ԱՍՈՐԱԿԱՆ ՊԱՐԲԵՐԱԿԱՆԸ ՈՐՊԵՍ
ՀԱՅ-ԱՍՈՐԱԿԱՆ ԼԵԶՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԵՑՈՒԹՅԱՆ ԵԶՎԿԻ ՆՄՈՒՇ

Ժ.02.06 «Ասիայի հին և նոր լեզուներ» մասնագիտությամբ
բանասիրական գիտությունների թեկնածուի գիտական
աստիճանի հայցման ատենախոսության

ՍԵՂՄԱԳԻՐ

ԵՐԵՎԱՆ – 2016

Ատենախոսության թեման հաստատվել է

Երևանի պետական համալսարանում:

Գիտական ղեկավար՝ Բանասիրական գիտությունների
թեկնածու, դոցենտ
Ս.Բ. Կարաբեկյան

Պաշտոնական ընդդիմախոսներ՝ Բանասիրական գիտությունների
դոկտոր, պրոֆեսոր
Մ.Լ. Խաչիկյան

Բանասիրական գիտությունների
թեկնածու, դոցենտ
Լ.Դ. Շահնազարյան

Առաջատար կազմակերպություն՝ Մեսրոպ Մաշտոցի անվան
հին ձեռագրերի ինստիտուտ

Պաշտպանությունը կայանալու է 2016 թվականի հունիսի 23-ին,
ժամը՝ 15:00-ին, ՀՀ ԳԱԱ Հ. Աճառյանի անվան լեզվի ինստիտուտում
գործող ՀՀ ԲՈՀ-ի՝ Լեզվաբանության 019 մասնագիտական խորհրդում
(հասցեն՝ 0015, ք. Երևան, Գրիգոր Լուսավորչի 15):

Ատենախոսությանը կարելի է ծանոթանալ ՀՀ ԳԱԱ Հ. Աճառյանի անվան
լեզվի ինստիտուտի գրադարանում:

Սեղմագիրն առաքված է 2016 թ. մայիսի 23-ին:

Մասնագիտական խորհրդի
գիտական քարտուղար,
բ.գ.թ., դոցենտ՝

Ն.Մ. Միմոնյան

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

Հետազոտության առարկան և նպատակը

1917 թ. Բոստոնում խարբերոցի հայախոս ասորիները հիմնադրեցին «Ասորվոց Հնգյակ Ընկերություն» կազմակերպությունը, որը 1919-1921 թթ. հրատարակել է «Բաբելոն» հայալեզու պարբերականը: Լույս է տեսել 54 համար, որոնք, բացառությամբ տպարանում պատրաստված տիտղոսագլուխների և տիտղոսաթերթերի, եղել են ձեռագիր և բազմացվել միմեոգրաֆիայի եղանակով: «Բաբելոնը» հրատարակել է ասորիների ազգային կյանքին վերաբերող բազմաբնույթ նյութեր և տարածել ԱՄՆ-ում և նախկին Օսմանյան կայսրության տարածքներում: Հայերենից բացի՝ պարբերականում ժամանակ առ ժամանակ զետեղվել են նյութեր ասորա-տառ և հայատառ թուրքերենով, ինչպես նաև անգլերենով:

«Բաբելոնի» գրական հայերենում հաճախ հանդիպում են հայատառ ասորական բառեր և արտահայտություններ: Ատենախոսության հիմնական նպատակներն են ուսումնասիրել «Բաբելոնի» լեզվական ոճի այս հետաքրքրական դրսևորումը, վերլուծել ասորական լեզվանյութը որպես այդպիսին և հայերենի մեջ նրա ներհյուսման առանձնահատկությունները, նախ և առաջ՝ հայերենում սեմական լեզվանյութի տառադարձության և ձևաբանական ու շարահյուսական «կլանման» առանձնահատկություններն ու օրինաչափությունները, ներկայացնել պարբերականի կառուցվածքը, վերհանել և լուսաբանել նրա ազգային-լեզվական արմատներն ու միջավայրը:

Աշխատանքում ներկայացվող ընդհանուր հարցադրումները

Ատենախոսության մեջ պարունակվող հիմնական հարցադրումներն են.

ինչո՞ւ են գրական հայերենի մեջ հանդիպում մեծ թվով ասորաբանություններ (խոսքն այս պարագայում, բնականաբար, վաղ միջնադարում հայերեն ներթափանցած ասորական փոխառությունների մասին),

արդո՞ք դրանք ներմուծվել են միտումնավոր, թե՞ արտահայտել են Խարբերոցի ասորիների կենդանի խոսքը,

արդո՞ք Խարբերոցի ասորիների խոսակցական լեզուն տարբերվել է քաղաքի հայերի խոսքից, և եթե այո՝ տեղի՞ն է արդյոք խոսել ասորիներին հատուկ «ենթալեզվի» մասին:

Այս հարցադրումների պատասխանը գտնելը պահանջել է, բացի զուտ

լեզվաբանական վերլուծությունից, տալ Խարբերդի և ընդհանրապես Արևմտյան Հայաստանի ասորիների քաղաքական և կրոնական կարգավիճակի, հոգևոր կյանքի, կրթական համակարգի ընդհանուր բնութագիրը՝ այդ թվում հատուկ կանգ առնելով ասորատառ հայերենի երևույթի վրա, որը «Բաբելոնի» հետ մեկտեղ հայախոս ասորիների մտավոր ժառանգության կարևորագույն մասն է:

Աշխատանքում ուսումնասիրվող խնդիրների արդիականությունն ու կիրառական նշանակությունը

Ատենախոսության արդիականությունը պայմանավորված է Մերձավոր Արևելքում ներկայումս ստեղծված աշխարհաքաղաքական դժվար իրավիճակով, որը վտանգում է քրիստոնյա համայնքների, նախ և առաջ՝ ասորիների գոյությունը, սպառնում ոչնչացնել նրանց յուրօրինակ և հոգևոր պատկառելի ժառանգությունը: Ուստի այդ ժառանգության բոլոր դրսևորումների ուսումնասիրման և պահպանման անհրաժեշտությունն ավելի ու ավելի հրատապ է դառնում: Հայոց ցեղասպանության հարյուրամյակն ուշադրության կենտրոն բերեց նաև ասորիների ցեղասպանությունը և առանձնահատուկ սրություն հաղորդեց այն ողբերգությանը, որն ասորի ժողովուրդը հարյուր տարի անց վերստին ապրում է իր պատմական բնօրրանում: Այդ իմաստով հայախոս ասորիների հոգևոր և մտավոր ժառանգության գլխավոր նմուշների՝ ասորատառ հայերեն ձեռագրերի և «Բաբելոնի» ուսումնասիրությունն առավել քան արդիական է դառնում:

Ատենախոսության կիրառական նշանակությունը նախ և առաջ պայմանավորված է Հայաստանում ասորագիտության զարգացման անհրաժեշտությամբ: Հայ գիտնականներն անդրադարձել են հայ-ասորական բազմաբնույթ կապերին, սակայն հայախոս ասորիներին վերաբերող հարցերը երբեք չեն ուսումնասիրվել: Հարկ է նաև նշել, որ ասորիների ներկայությունը Հայաստանում մինչ օրս հիմնա-

* Մուսուլմանական դրոշմը պարզաբանելու համար կարելի է հիշատակել հայկական և հայաստանական գրություններ (այդ թվում՝ հայկական խաչքարի վրա) և քերականության ու ներքին կառուցվածքի մասին Մարտին Բեհեմի վանքի հյուսիսային խորհրդակցության 2015 թ. սեպտեմբերի 15-ի մասնակցության ավարտագրի և հայաստանական պատմության «գրքի հայտնի» ներքին: Այդ դուրս հանդիման, կանադացի և հայաստանական գիտնականներ (ներառյալ մուսուլմանական հեղինակ) ջանքերի շնորհիվ հաջողվեց ժամանակին պատճեններ և ուսումնասիրել գրությունները և հրատարակել արդյունքները «Ասորագիտական հետազոտություններ և ներքին կառուցվածքի կանադական ընկերակցության հանդեսում»՝ այդ տեղանակով պահպանելով մշակութային արժեքներն ապագա սերունդին համար:

կանում դիտարկվել է ՀՀ տարածքում ներկայումս գոյություն ունեցող համայնքի (որը սկիզբ է առել XIX դ. սկզբի ռուս-պարսկական պատերազմի արդյունքում) տեսանկյունից, մինչդեռ Արևմտյան Հայաստանի՝ անհամեմատ ավելի երկար պատմություն ունեցող ասորական համայնքները գրեթե ամբողջությամբ անտեսված են եղել:

«Բարելոնի» և նրան առնչվող երևույթների ուսումնասիրության արդյունքները կարող են համալրել միջմշակութային հիմնախնդիրներով զբաղվող մասնագետների գործիքաշարը, լրացուցիչ գիտելիքներ տրամադրել Մերձավոր Արևելքի հարցերով զբաղվող փորձագետներին՝ ակադեմիական և քաղաքագիտական ոլորտներում տեսական և գործնական կիրառության համար:

Աշխատանքի նորույթը

Ատենախոսության նորույթն այն է, որ ա) Հայաստանում առաջին անգամ գիտական շրջանառության մեջ է դրվում և հայ մամուլի պատմությանն է ավելացվում ոչ հայկական միակ հայալեզու պարբերականը, բ) առաջին անգամ ուսումնասիրվում է «հայախոս ասորիներ» երևույթն իր պատմական զարգացման և բազմաթիվ դրսևորումների մեջ, գ) առաջին անգամ իր ամբողջության մեջ դիտարկվում է «հայկական զարշունիի» քիչ ուսումնասիրված երևույթը, դ) մանրամասն ուսումնասիրվում և վերլուծվում են հայերենի և ասորերենի լեզվական համակեցության՝ «Բարելոնի» տրամադրած եզակի նմուշները:

Աշխատանքի մեթոդաբանությունը

Ուսումնասիրության մեթոդաբանական հիմքը կազմում են գիտական հետազոտության իմացաբանական հիմքերը, պատմահամեմատական, պատմավերլուծական քննության, միջգիտակարգային հետազոտության մեթոդները, որոնք ապահովում են ատենախոսության շրջանակներում ավարտուն ուսումնասիրություն՝ հետազոտական համապատասխան ելքերով:

Աշխատանքի փորձաքննությունը

Ատենախոսության մի շարք դրույթներ հրատարակվել են Ասորական հետազոտությունների կանադական ընկերակցության հանդեսում (Journal of Canadian Society for Syriac Studies, անգլերեն), Երևանի պետական համալսարանի կողմից հրատարակվող «Արևելագիտության հարցեր» և ԵՊՀ արաբագիտության ամբիոնի

կողմից հրատարակվող «Արաբագիտական ուսումնասիրություններ» պարբերական ժողովածուներում: Կանադական պարբերականում լույս տեսած հոդվածը վերահրատարակել է ԱՄՆ գործող Gorgias-Press գիտական հրատարակչությունը: «Բաբելոնի» նվիրված զեկուցումով մենք հանդես ենք եկել նաև «Ասորական հետազոտությունների կանադական ընկերակցության» 2009 թ. կոնֆերանսում (Տորոնտո): «Բաբելոնի» հակիրճ անդրադարձ է պարունակում մեր «Արամեագիտության և ասորագիտության ներածություն» մենագրությունը: Ատենախոսության վրա աշխատելիս ակտիվորեն համագործակցել եմ շվեդական Սյոդերտալե քաղաքի համալսարանին կից գործող «Ասորական ազգային արխիվի» հետ (տնօրեն՝ Ժան Բեթ-Սավոնե):

Հարցի ուսումնասիրման պատմությունը

Լինելով հայալեզու միակ ոչ հայկական պարբերականը՝ «Բաբելոնը» հայտնի չի եղել հայ մամուլի պատմությունն ուսումնասիրող մասնագետներին և երբևիցե չի հիշատակվել հայկական պարբերականների ամենամաքողջական անվանացանկերում: Մյուս կողմից՝ հայալեզու լինելու հանգամանքն անհաղթահարելի խոչընդոտ է եղել ասորի և այլազգի այն հատուկենտ մասնագետների համար, որոնք տեղյակ են եղել այդ պարբերականի գոյությանը և այլ պարագաներում պատրաստ կլինեին ուսումնասիրելու այն:

1900 թ. ի վեր ԱՄՆ-ում հրատարակված ասորական մամուլին վերաբերող Խ. Յասիմի հետազոտությունը, որը պարունակում է ասորական պարբերականների ամենաընդգրկուն ցանկը, «Բաբելոնի» որևէ անդրադարձ չի պարունակում: Պատճառը թերևս այն է, որ հեղինակը կենտրոնացել է «արևելյան» ասորիների մամուլի վրա, և նրա ուշադրությունից վրիպել են «արևմտյան» ասորիների (որոնց դասվում են հայախոս ասորիները) հրատարակումները:

Ասորի գիտնականներից առաջինը «Բաբելոնը» փորձել է գիտական շրջանառության մեջ դնել ԱՄՆ-ում բնակվող պատմաբան Է.Նաբին, որը երեք տարբեր առիթներով հիշատակում է այն: Առաջին դեպքում նա նշում է, որ պարբերականի լեզուն «սովորաբար ասորերեն է», երկրորդում՝ գրում, որ ««Բաբելոնը» գրված է հայերեն տառերով, բայց ասորիների խոսակցական լեզվով», իսկ երրորդում հայտնում է, որ պարբերականի «գրեթե բոլոր տեքստերը գրված են հայկական տառերով, սակայն դրանց մեծ մասը դասական ասորերենով է»: Ակնհայտ է, որ հեշտությամբ զանազանելով հայկական գիրը՝ հայերենին չտիրապետող Է.Նա-

բին դրա հետ մեկտեղ չի կարողացել (կամ չի կամեցել) ճիշտ մատնանշել «Բաբելոնի» հիմնական լեզուն՝ հայերենը:

«Բաբելոնի» անդրադարձել է մայրացի Բ.Տրիգոնա-Հարանին, որին հաջողվել է ավելի ճիշտ պատկերացում կազմել պարբերականի մասին: 2009 թ. լույս տեսած «Օսմանյան ասորիները 1908-ից 1914 թթ.» գրքում նա երեք անգամ հիշատակում է «Բաբելոնը»՝ նախ նշելով, որ ««Բաբելոնը» գերազանցապես հայերեն էր՝ օսմանական թուրքերեն և անգլերեն հոդվածների փոքր թվով», ապա գրելով, որ «ասորիների համար հայալեզու թերթ՝ «Բաբելոն» 1920 և 1921 թթ. Բոստոնում հրատարակում էր մի խումբ, որը նաև գրքույկներ էր տպում այդ լեզվով», ապա հիշատակում է Նաում «Բեշարուֆին», «որը ներգրավված էր Բոստոնում «Բաբելոն» պարբերականի խմբագրման գործում»: Hugoye միջազգային ասորագիտական հանդեսում հրատարակած հոդվածում Բ.Տրիգոնա-Հարանին նշում է, որ «քիչ բան է հայտնի «Բաբելոնի» մասին, թեև հայերենի գործածությունը և Մասաչուսեթսում հրատարակվելը հուշում են առնչություն Խարբերդի հետ»:

Գրականության համառոտ տեսություն

Աշխատանքում օգտագործվել են հատկապես «Բաբելոնի» ազգային-լեզվական արմատներն ու միջավայրը՝ գլխի նյութին վերաբերող մի շարք կարևոր ուսումնասիրություններ, այդ թվում՝ Ս.Բրոքի, Դ.Գոնթի, Ս.դե Կուրտուայի, Ս.Դոնաբեդի, Ջ. Ջոզեֆի, Ջ.Մաքթարթիի, Է.Նաբիի, Հ.Տակահաշիի, Բ.Տրիգոնա-Հարանիի և մի շարք այլ հեղինակների: Հատկապես պետք է նշել Ռ.Հովհաննիսյանի խմբագրությամբ հրատարակված *Armenian Tsopk/Kharpert* և *Armenian Tigranakert/Diarbekir and Edessa/Urfa* ժողովածուները: Լեզվաբանական վերլուծության համար օգտագործվել են նշանավոր սեմագետներ Փ.Սմիթի, Օ.Յաստրովի և Մ. Սոկոլովի աշխատությունները: Խարբերդում Մեծ եղևնի օրերին տեղի ունեցած իրադարձությունների մասին արժեքավոր տեղեկություններ են պարունակում ամերիկացի դիվանագետ Լ.Դեվիսի և Խարբերդի «Եփրատ» քոլեջի վերջին նախագահ Հ.Ռիզսի հուշերը: Հայալեզու աղբյուրներից հատկապես կարևոր են Վ.Հայկի «Խարբերդ և անոր ոսկեղեն դաշտը», Մ.Ճիզմեճյանի «Խարբերդ և յուր գավակները», Ա.Նազարյանի «Արյունոտ ժպիտը» գրքերը: «Ասորական պատմության և հարանվանական բաժանման հակիրճ ակնարկ» ենթագլուխը հիմնված է մեր «Արամեագիտության և ասորագիտության ներածություն» մենագրության վրա: Որպես տեղեկատվության հարուստ աղբյուր օգտագործվել են հենց «Բաբելոնի», ինչպես

նաև խարբերոցի ասորիների կողմից ԱՄՆ-ում 1930-ականներին հրատարակած *Assyrian Progress* պարբերականի նյութերը:

Աշխատանքի կառուցվածքը

Աշխատանքը բաղկացած է ներածությունից, երեք գլուխներից, եզրակացություններից, երկու հավելվածներից և օգտագործված գրականության ցանկից:

Ներածության մեջ ներկայացվում են ատենախոսության հիմնական դրույթներն ու հարցադրումները, ուսումնասիրության մեթոդաբանական հիմքը, պարզաբանվում են թեմայի արդիականությունը, հետազոտական խնդիրներն ու նպատակը, տրվում են գրականության համառոտ տեսությունը, ինչպես նաև հարցի ուսումնասիրման պատմությունը:

Առաջին գլուխը «Բաբելոնի» ազգային-լեզվական արմատներն ու միջավայրը բաղկացած է հինգ ենթագլուխներից:

«Ասորական պատմության և հարանվանական բաժանման հակիրճ ակնարկ» ենթագլուխը պարունակում է տեղեկություններ, որոնք անհրաժեշտ են ատենախոսության մեջ անդրադարձի արժանացած պատմա-մշակութային և կրոնագաղափարախոսական իրողությունների ճիշտ ընկալման համար: Ներկայացվում է ժամանակակից ասորիների անմիջական նախնիների՝ արամեացիների հնագույն և վաղ միջնադարյան պատմությունը: Պարզաբանվում է այն եզակի դերը, որն արամեերենը խաղացել է Նոր ասորեստանյան թագավորության գոյության վերջին շրջանում, Աքեմենյան կայսրությունում և ամբողջ վաղ միջնադարում՝ որպես ազգամիջյան և միջազգային հաղորդակցության լեզու (*lingua franca*):

Քրիստոնեության տարածումից հետո արամեացիների միջավայրում տարածում է գտել *սուրյայա* «սիրիացի» նոր ինքնանվանումը: Հայերի մեջ որպես *սուրյայա* բառի համարժեք գործածվում էր «ասորի» բառը (չջփոթել «ասորեստանցի» բառի հետ): «Մի ընդհանրական, առաքելական և սուրբ» վաղ քրիստոնեական եկեղեցու պառակտումը հանգեցրեց նաև ասորիների հարանվանական պառակտմանը: Նրանց այն հատվածը, որը հայտնվել էր Սասանյան Իրանի տիրապետության ներքո («արևելյան» ասորիներ), առավելապես հակվեց նեստորականությանը՝ հիմնելով Արևելքի եկեղեցին, մինչ բյուզանդական տարածքներում բնակվողները հակվեցին միաբնակությանը (Անտիոքի ասորի ուղղափառ եկեղեցի՝ «հակոբիկներ») և քաղկեդոնականությանը («մելքիներ»): Ուշ միջնադարում նեստորականների և հակոբիկների մի հատված ունիա կնքեց Վատիկանի հետ՝ կազ-

մելով, համապատասխանաբար, Քաղդեական և Ասորի կաթովիկ եկեղեցիները:

«Հայկական գաղղունի-ն և ուշ միջնադարի ասորական հայախոս համայնքները» ենթագլուխն անդրադառնում է XVI-XVII դդ. Մալաթիայի և Խարբերդի շրջաններում կազմավորված հայախոս հակոբիկ ասորիների համայնքներին և այդ շրջանի նրանց հոգևոր ժառանգության մնացորդներին: Խոսքն ասորատառ հայերենի նմուշների, մասնավորապես՝ Ալֆոնս Մինգանայի հավաքածուի *Mingana syr.* 44, Հարվարդի համալսարանի *Harvard Syriac* 54, Յեյլի համալսարանի հմ. 10, Մալքե բար Նիկողիմոսի, Վատիկանի գրադարանի *Vat. Syr.* 544 ձեռագրերի մասին է: Ըստ ամենայնի, ասորատառ հայերենն Օսմանյան կայսրության հայախոս ասորիների մեջ որոշ գործածություն է ունեցել մինչև 1915 թ. Մեծ եղեռնը. այսպես, տեղեկություններ են պահպանվել ասորատառ հայերենով Ավետարանի մասին, որը վերջին անգամ տեսել են Դիարբեքիրում 1890-ականների սկզբին:

«Ասորիները XIX-XX դդ. Օսմանյան կայսրությունում և Իրանում» ենթագլուխը հակիրճ ներկայացնում է ասորական համայնքներն այդ երկու պետություններում: Մասնավորապես, արևելյան ասորիները (նեստորականներն ու քաղդեականները) բնակվում էին Վանի վիլայեթի Հաքքյարիի սանջակում և հարակից տարածքներում, Մոսուլի վիլայեթի հյուսիսում և Ուրմիա լճի արևմտյան ափին հարող շրջաններում: Այս ասորիները շարունակում էին խոսել արդի արամեական բարբառներով, որոնցից մեկի՝ Ուրմիայի բարբառի հիման վրա ձևավորվեց արդի գրական ասորերենը: Արևմտյան ասորիները (հակոբիկները) հիմնականում բնակվում էին Դիարբեքիրի, Սեբաստիայի, Վանի, Բիթլիսի, Խարբերդի վիլայեթներում, ինչպես նաև Սիրիայում և Լիբանանում:

Խոշոր քաղաքներում և բազմաթիվ գյուղական վայրերում հայերն ու ասորիներն ապրում էին կողք կողքի և ունեին բարիդրացիության և համագործակցության բազմադարյան ավանդույթներ: Օսմանյան կայսրությունում ասորիներն սկզբնապես ընդգրկված էին հայկական առաքելական և կաթովիկ միլլեթների մեջ, ապա XIX դ. ընթացքում ձևավորվեցին բուն ասորական միլլեթներ: Հայերի հետ հատկապես սերտ կապեր ունեին բողոքական ասորիները, որոնք բողոքական հայերի հետ ընդհանուր համայնքներ էին կազմում:

Օսմանյան կայսրության արևմտյան ասորիները հիմնականում արաբախոս, թրքախոս, քրդախոս և արամեախոս էին: Առանձին և բավականին սովորականված էին հայախոս ասորիները: Ամբողջապես հայախոս էին Խարբերդի և Ուրֆայի ասորիները, մեծ թվով հայախոսներ կային Բիթլիսում, Մալաթիայում,

Մարաշում և Ադանայում:

«Խարբերդի հայախոս ասորիները» ենթագլխում նախ անդրադառնում ենք ասորիների ներկայությանն այդ քաղաքում, որն առաջին անգամ արձանագրված է XI դ.: Նրանց թիվն այս շրջանում աճել է հետագա երկու դարերի ընթացքում՝ բյուզանդացիների քաջալերմամբ: Խարբերդը եղել է Ասորի ուղղափառ եկեղեցու թեմական կենտրոն՝ իր եպիսկոպոսով և վանքով: Մինչև Մեծ եղեռնը Խարբերդի վիլայեթում բնակվել են մինչև 5 հազար ասորիներ: Բուն Խարբերդ քաղաքում այդ ժամանակաշրջանում բնակվել են 1 հազար ասորի: Մեծ թվով խարբերդցի հայախոս ասորիներ 1890-ականներից սկսած բնակվել են ԱՄՆ-ի Մասաչուսեթսի նահանգում: Ասորիները Խարբերդում ունեցել են սեփական թաղը («ասորվոց թաղ»), որը կազմել է քաղաքի «Վարի թաղի» մի մասը:

«Ասորվոց թաղում» կար ասորական նախակրթարան և մեկ իգական դպրոց, սակայն ասորի ծնողներից շատերը նախընտրում էին իրենց զավակներին ուղարկել հայկական դպրոցներ: Ասորիների համար բաց էր նաև Խարբերդի հանրահայտ «Եփրատ» քոլեջը, որն իր գոյության ընթացքում տվել է մի քանի ասորի շրջանավարտ: «Բաբելոնի» հեղինակների, թղթակիցների և նամակագիրների մեծ թիվը և հայոց լեզվին նրանց կատարյալ տիրապետումը վկայում է հայերենով լավ կրթություն ստացած ասորիների մեծ թվի մասին:

Մի քանի սերունդներ շարունակ լինելով հայախոս՝ Խարբերդի ասորիներն, այդուհանդերձ, չէին դիտում հայերենը որպես մայրենի լեզու: Նրանց համար այն միշտ մնում էր «օտար», «ուրիշների» լեզու: Սեփականը կորցրած լինելու հանգամանքը բարդությի տեսքով իշխում էր ասորի մտավորականների վրա. դրա դրսևորումները գտնում ենք նույն «Բաբելոնի» էջերում: Խարբերդի ասորիների ազգային ինքնության գլխավոր գրավականը և հայերից նրանց զանազանող գլխավոր գործոնը նրանց ազգային ավանդական եկեղեցիներն էին:

Մեծ եղեռնի օրերին Խարբերդի ասորիները կիսեցին հայերի ճակատագիրը: 1920-ականների սկզբին Խարբերդում դեռ մնում էին որոշ թվով ասորիներ, որոնք ԱՄՆ-ում բնակվող իրենց հայրենակիցների օգնությամբ փորձում էին ինչ-որ կերպ վերականգնել իրենց ազգային կյանքը, սակայն նրանք էլ, ի վերջո, ստիպված եղան լքել Խարբերդը:

«Խարբերդի ասորիներն ԱՄՆ-ում» ենթագլխում անդրադառնում ենք խարբերդցի ասորիների հաստատմանը Մասաչուսեթս նահանգում: Ամերիկա-

բնակ խարբերոցիները հիմնել էին մի քանի միություններ ու ընկերակցություններ, որոնց հիմնական նպատակն էր Խարբերում մնացող ասորիներին դրամական աջակցություն ցուցաբերելը: Մասաչուսեթսի հայախոս ասորիների միջավայրում ծնունդ առած ամենանշանավոր կազմակերպությունը «Ասորվոց Հնգյակ ընկերությունն» էր, որը, ինչպես նշվեց, «Բաբելոնի» հրատարակիչն էր:

«Բաբելոնը» բավականին լավ է լուսաբանում ԱՄՆ-ում XX դ. առաջին երկու տասնամյակներին ասորիների հասարակական և մշակութային կյանքը: 1920-ականների համար նման վստահելի սկզբնադրյոր գոյություն չունի, իսկ 1932 թ. լուսանջլեասաբնակ երիտասարդ խարբերոցի ասորիներն սկսում են անգլերեն հրատարակել *Assyrian Progress* պարբերականը, որը լույս է տեսել մինչև 1938 թ.:

Assyrian Progress-ը թույլ է տալիս քիչ թե շատ հստակ պատկերացում կազմել 1930-ականներին խարբերոցի ասորիների մեջ տիրող լեզվական իրավիճակի մասին: Ակնհայտ է, որ ավագ և միջին սերունդը, լավ չտիրապետելով անգլերենին, շարունակում էր կառչել հայերենից: Ինչ վերաբերում է ԱՄՆ-ում մեծացած անգլախոս սերնդին, ապա այն պահպանում էր հայերեն խոսելու որոշ ունակություն (որակի անխուսափելի կորստով), քանի որ դա այն լեզուն էր, որը երիտասարդները լսում էին իրենց ընտանիքներում և որով ստիպված էին հաղորդակցվել իրենց ավագների հետ: 1930-ականներին և հավանաբար հետագա մեկերկու տասնամյակներում ասորիների մեջ հայերենի պահպանմանն անկասկած նպաստում էր հայերի հետ սերտորեն կապված լինելու հանգամանքը: Դժվար է ասել, թե որքանով էր Ամերիկայում ծնված սերունդը պահպանում հայերենով հաղորդակցվելու ունակությունն ավելի հասուն տարիքում, երբ կապը հայախոս սերնդի հետ բնական պատճառներով խզվում էր: Ասորական ինքնագիտակցություն պահպանող խարբերոցի ասորիների ներկայումս ապրող սերնդի համար հայերենն արդեն ամբողջությամբ օտար լեզու է, թեև քչերի համար է գաղտնիք, որ այն եղել է իրենց պապերի և տատերի լեզուն: Այստեղ հարկ է նշել, որ ի տարբերություն խարբերոցիների՝ Ուրֆայից ծագող ասորիներից շատերը, որոնք ներկայումս հիմնականում բնակվում են Հալեպում և Հյուսիսային Ամերիկայում, շարունակում են պահպանել հայերենը որպես «ընտանեկան լեզու»:

Երկրորդ գլուխը՝ «Բաբելոնի» կառուցվածքը, նախ տալիս է պարբերականի ընդհանուր բնութագիրը, ապա մանրամասնորեն անդրադառնում նրա

մշտական բաժիններին: ԽՅասիմի հիշատակված հետազոտության մեջ թվարկվում են այն բնագավառները, որոնց սովորաբար անդրադառնում էր ԱՄՆ-ի աստրական մամուլը, այն է՝ ազգային խնդիրներ, գովազդեր, զվարճալիք, հատուկ իրադարձություններ, գրական նյութեր, մարզական լուրեր, կրոն, կրթություն: Բացի մարզականից՝ «Բաբելոն» այս կամ այն ծավալով պարունակում է թվարկված բոլոր ոլորտները:

«Բաբելոն» ուներ հետևյալ մշտական բաղադրիչներն ու բաժինները.

Տիտղոսագլուխներ և տիտղոսաթերթեր: Հայ-ասորական լեզվական հասկեցության տեսանկյունից «Բաբելոնի» տիտղոսագլուխներն ու տիտղոսաթերթերը պարբերականի թերևս ամենահատկանշական մասերից են: Ի տարբերություն պարբերականի հիմնական զանգվածի, որն ամբողջությամբ ձեռագիր է, տիտղոսագլուխներն ու տիտղոսաթերթերը տպվում էին տպարանում:

Խմբագրականներ: Առաջին մի քանի համարների խմբագրականներն իրենց բովանդակությամբ ունեն առավելապես ծրագրային բնույթ: Խմբագրականների մի զգալի թիվ չունի որևէ կոնկրետ թեմա և կրում է ընդհանուր հայրենասիրական կամ խրատախոսական բնույթ: Խմբագրականներից բացի՝ խրատախոսական, բարոյագիտական և հայրենասիրական բնույթ են կրում նաև «Բաբելոնի» այլ հոդվածներից շատերը: Դրանց մեջ կարելի է առանձնացնել կանանց հասցեագրված հոդվածները, որոնց հեղինակները հենց կանայք էին:

Պաշտոնական հաղորդագրություններ: Այս խմբին դասում ենք հաշվետվություններն ու հաղորդագրություններն ասորական կազմակերպությունների ժողովների, ազգային հավաքների, համայնքային կառույցների ղեկավար ատյանների ընտրությունների մասին: Պաշտոնական հաղորդագրությունների շարքին կարելի է դասել նաև տվյալները Թուրքիայում և Մերձավոր Արևելքում բնակվող ասորիներին, ինչպես նաև Ադանայի ասորական որբանոցին ուղարկվող մարդասիրական օգնության մասին:

Մավոսնույթո Տասույթո: Հրատարակման առաջին տարվա 10-րդ համարում գտնում ենք «Մանր հավաստի լուրեր» բաժինը, որը հաջորդ համարում կոչվում է «Մանր լուրեր»: 12-րդ համարում այս բաժինը կրում է ասորերեն *Մասանույթո Զրուրէ* վերնագիրը, որին հաջորդում է հայերեն «Մանր լուրեր» թարգմանությունը: «Մանր լուրերը» պարունակում են ասորական համայնքների առօրյային և քաղաքական անցուդարձին վերաբերող կարճ լուրեր և ծանուցումներ: 14-րդ համարում բաժինը վերնագրված է *Մավոսնույթո Մուրեօօ*, որը կարելի է թարգմանել որ-

պես «Ասորական լուրեր»: 15-րդ համարից բաժինն սկսում է կոչվել *Մավտոնություն* *Suunirojo*. այն բառացիորեն նշանակում է «Ասորիների լուրեր»:

Այլ հաղորդագրություններ և նամակներ: *Մավտոնություն* *Suunirojo* բաժնին սերտորեն առնչվում են առանձին հոդվածային միավորներ հանդիսացող և ծավալով սովորաբար ավելի ընդարձակ հաղորդագրություններն ու նամակները կոնկրետ քաղաքներից: Դրանց մեծ մասը սովորաբար հանդես է գալիս «Լուրեր [քաղաքից]», ավելի հազվադեպ՝ «Հաղորդագրություն [քաղաքից]», «[Քաղաքի] ասորիները», «Ասորիները [քաղաքի] մեջ» և այլ նման վերտառություններով:

Մէն Ըլլէ-Մէն Ըլքո / Պուրատան-Շուրատան: Առաջին տարվա 14-րդ համարը պարունակում է հայատառ թուրքերեն *Պուրատան-Շուրատան* («Այստեղից-այնտեղից») բաժինը, որը ներկայացնում է 11 ասացվածք հայատառ թուրքերենով: Տիտղոսաթերթի վրա մեծատառերով տպված *ՊՈՒՐԱՏԱՆ* թուրքերեն բառին հետևում է փոքրատառերով տպված ասորերեն *Մէն Ըլլէ* բառակապակցությունը, որը բառացիորեն նշանակում է «վերևից»: Ապա հետևում է *ՇՈՒՐԱՏԱՆ* բառը, որից հետո, նույնպես փոքրատառերով, ասորերեն *Մէն Ըլքո* («այստեղից») կապակցությունը: Այսինքն, *Մէն Ըլլէ – Մէն Ըլքո* արտահայտությունը գործածված է որպես թուրքերեն *պուրատան-շուրատան* արտահայտության հոմանիշ: Հետագա համարներում *Մէն Ըլլէ – Մէն Ըլքո* բաժինը դառնում է մշտական՝ շարունակելով հայերեն ներկայացնել ասացվածքներ, աֆորիզմներ, «իմաստավոր նախադասություններ», «կենսական գիտելիքներ»:

Հայտարարություններ և գովազդ: «Բաբելոնը» պարունակում է մեծ թվով տարաբնույթ հայտարարություններ, ծանուցումներ, ծանոթություններ և այլն: Որպես մշտական բաժին կարելի է առանձնացնել «Բաբելոնին» դրամական նվիրատություններ արած անձանց և բաժանորդների ցանկերը: Այս խմբին պետք է դասել նաև «Բաբելոնի» անունից այս կամ այն առիթով արվող կարճ շնորհավորանքները: «Բաբելոնն» իր էջերը տրամադրում էր նաև մասնավոր հայտարարությունների:

Երրորդ գլուխը՝ «Բաբելոնի» լեզվական առանձնահատկությունները, որն ատենախոսության գլխավոր մասն է, նախ կարճ անդրադառնում է «Բաբելոնի» հայերենին: Լինելով Խարբերդի ասորիների միջավայրում ծնունդ առած պարբերական՝ «Բաբելոնն» առավելապես գործածում է գրական արևմտահայերենը: Ինչպես նշվել է, հոդվածների ճնշող մեծամասնության լեզվի հարստությունը և ոճական բազմազանությունը կասկած չեն թողնում, որ հոդվածագիրների մեծ մասը

սը ստացել էր հայկական լավ կրթություն: Դրա հետ մեկտեղ որոշ հողվածներում, հատկապես նրանցում, որոնք լուսաբանում են ազգային կամ համայնքային կյանքն ու անցուդարձը, նկատվում են որոշ շեղումներ գրական արևմտահայերենի ոճական և շարահյուսական կանոններից, որը թերևս բացատրվում է խոսակցական լեզվի ազդեցությամբ: Ինչպես երևում է հողվածներից մեկից, լեզվական թերություններն առաջացնում էին որոշ ընթերցողների դժգոհությունը: Խարբերում բնակվող ասորիների մեջ, անկասկած, տարածված էր հայերենի Խարբերդի բարբառը, սակայն պարբերականի էջերում այդ բարբառի որևէ նմուշ չկա:

Արևմտահայերենի կողքին «Բաբելոնում» կան հողվածներ, որոնց լեզուն արևելահայերենն է: Սրանք առավելապես երկրորդ տարվանից խմբագրի պարտականություններն ստանձնած Նաում Բեշարովի հողվածներն են: Լինելով Խարբերդի ծնունդ՝ նա ի ծնե արևմտահայերենի կրող էր. շրջադարձը դեպի արևելահայերեն տեղի էր ունեցել երկար տարիներ Կովկասում բնակվելու հետևանքով: Ազգանվան «-ով» վերջավորությունը վկայում է, որ Բեշարովը մինչև ԱՄՆ-ում հաստատվելը ռուսահպատակ է եղել (ցարական Ռուսաստանում ասորիներին գրանցում էին ռուսականացված ազգանուններով, որոնք Հայաստանի ասորիների մեջ պահպանվում են մինչև օրս):

Գլուխն այնուհետև անդրադառնում է «Բաբելոնում» առկա ասորական լեզվական նյութին: «Բաբելոնի» ասորական էությունը, բացի, իհարկե, նրա տիտղոսաթերթերից, տիտղոսագլուխներից և հողվածների բովանդակությունից, «մատնում» են նրա հայերենի մեջ ներհյուսված 160-ից ավելի հայատառ (հատուկենտ դեպքերում՝ ասորատառ) ասորական լեզվական միավորները (բառեր, քերականական մասնիկներ և այլն), ավելի հազվադեպ՝ նաև բառակապակցություններ կամ կարճ նախադասություններ:

Առաջին անգամ ասորական հայատառ բառակապակցություն հանդիպում է առաջին տարվա 5-րդ համարում՝ *ասյունտ պաշմայն*. սա Տերունական ադոթքի ասորերեն աղավաղված անվանումն է: Հաջորդ՝ 6-րդ համարն առաջինն է, որում «Բաբելոն» արդեն հստակ հանդես է գալիս որպես ասորերենի ուսուցման գործիք: Համարը պարունակում է հայկական տառերով գրված մի շարք ասորական որակական և դասական թվականներ, որոնք միահյուսված են հայկական տեքստի մեջ՝ փոխարինելով հայերենի համապատասխան թվականներին:

Ասորական լեզվանյութի մատուցումն ինչ-որ ձևով կանոնակարգելու առաջին փորձն արվում է 13-րդ համարում: Այն պարունակում է «Բաբելոնի» էջե-

րում հայտնված 5 բառացանկերից առաջինը, որում ներկայացվում են 1-ից 10-ը քանակական թվականները: 14-րդ համարում լույս է տեսնում երկրորդ բառացանկը, որը պարունակում է 11-ից 20-ը թվականները: 15-րդ համարում լույս է տեսնում երրորդ բառացանկը, որը ներկայացնում է 20-ից բարձր թվականների՝ ներառյալ հարյուրավորների կազմության սկզբունքը: 16-րդ համարում գետեղված բառացանկը պարունակում է շաբաթվա օրերի անունները, ինչպես նաև «կես», «օր», «գիշեր», «իրիկուն» և «առավոտ» բառերը: Վերջին՝ հինգերորդ, բառացանկը գետեղված է 18-րդ համարում և պարունակում է 18 գործածելի բառ: Բառացանկերի հրատարակմանը զուգահեռ՝ շարունակվում էր նաև հոդվածների մեջ ասորական լեզվանյութի ընդգրկումը տարերային եղանակով, ընդ որում այդ եղանակով գործածված ասորական միավորներն իրենց քանակով գերազանցում են բառացանկերի մեջ մատուցված նյութը:

«Բաբելոնում» ասորական լեզվանյութն ըստ խոսքի մասերի ներկայացված է գոյականներով, ածականներով, թվականներով (որակական և քանակական), դերանուններով և բայերով: Դրանք բոլորը «ներմուծված» են դասական ասորերենից և անմիջական առնչություն չունեն արդի արամեական բարբառների համապատասխան ձևերի հետ: Արտասանությունը, որքանով թույլ է տալիս հայկական գիրը, վերաբարտադրում է արևմտյան ասորիների մեջ ընդունված դասական ասորերենի ընթերցման եղանակը, որում երկար [a] ձայնավորը փոխարինվում է [o] ձայնավորով՝ *alaha > ալոհո, zumara > զուօրո*, և այլն:

Ասորական լեզվանյութում կարելի է առանձնացնել մի քանի թեմատիկ խմբեր, ինչպես՝ ասորական տառերի անվանումները, ամիսների և շաբաթվա օրերի անվանումները, հոգևորականների տիտղոսները, կրոնին վերաբերող այլ հասկացություններ:

«Բաբելոնում» արձանագրված ասորական լեզվական նյութն առավելապես ներկայացված է հայերեն տեքստի մեջ ներհյուսված առանձին բառերով: Դրա հետ մեկտեղ՝ պարբերականում հանդիպում է նաև հայատառ առնվազն երեք ամբողջական նախադասություն, որոնք նույնպես կրոնական բնույթի են, ինչպես՝ *Ըպրիիս մավլլօտե ըստօրան ու ռիշօթ շիթօ խօթթօ արբրիիթօ* «Օրհնյալ է մեր Տիրոջ ծնունդը և օրհնյալ նոր տարի»:

Ասորական բառերի հայերեն տառադարձության հիմնական սկզբունքները ներկայացված են ըստ հետևյալ խմբերի՝ *Bagad-Kapat* խմբի միջատամնային շփականներ, կոկորդային բաղաձայններ և *շվա*, էմֆատիկ բաղաձայններ, այլ բա-

դաձայններ, շվա-ի մետաթեզ (դրափոխություն): Այս խմբերի զննումն այն եզրակացությանն է հանգեցնում, որ «Բաբելոնը» չուներ ասորական բառերի տառադարձության հստակ սկզբունք. նույնիսկ այն բառերը, որոնք ներկայացված են բառացանկերում, այլուր կարող են գործածվել տարբեր գրությամբ:

ձևաբանական առումով «Բաբելոնի» մեջ արձանագրված ասորական բառերը չեն տարբերվում հայկական բառերից, այլ կերպ ասած՝ ասորական բառերը պարբերականում ենթարկված են հայերենի ձևաբանական նորմերին: Մեռի քերականական կարգի բացակայությունը հայերենում իսպառ վերացրել է սեռի ավանդական դրսևորումներն ասորական բառերի որոշ խմբերում, առաջին հերթին՝ թվականներում, որոնց՝ դասական ասորերենի երկու սեռերին պատկանող գույգերի դիմաց «Բաբելոնում» տեսնում ենք միասնականացված ձև, այսինքն՝ հայերենի թվականին համապատասխանում է ասորական թվականի մեկ ձև: Թվի կարգի՝ ասորերենին բնորոշ ցուցանիշները նույնպես որևէ կերպ չեն դրսևորված:

Ընդգրկվելով հայկական տեքստի մեջ՝ ասորական բառերը հեշտությամբ փոխարինում են համապատասխան հայկականները: Գործածվելով նախադասության մեջ համապատասխան հայկական բառի փոխարեն՝ ասորական բառերը հեշտությամբ ընդունում են համապատասխան հոլովական վերջավորությունը, ինչպես, օրինակ՝ «*Ըմեազրո* [հարգելի] Տավուտ Էլյի կը հադորդէ, որ *քէնունը ըհրոյ* [հունվար] *ըթժոնասար* [18] *հատ ըտ շապօի* [կիրակի] *յավժո* [օր] ժամը *թէշօին* [իննին]...»: Սա, իհարկե, պայմանավորված է ոչ թե ասորական բառերի առանձնահատկություններով, այլ նրանով, որ հայերենը հեշտությամբ ընդգրկում է օտար բառերն իր ձևաբանական համակարգի մեջ:

Եզրակացությունների մեջ ամփոփվում են ատենախոսության շրջանակներում կատարված հետազոտության արդյունքները: Այսօր կարելի է միայն գուշակել «Բաբելոնի» հայերենին ասորական բառերի ավելացման իրական պատճառը: Ինչպես նշվել է, ասորի հետազոտողները, մասնավորապես Է.Նաբին, այն

կարծիքին էին, թե Խարբերդի ասորիները կարող էին ասորախոս լինել: Թեև հենց «Բաբելոնում» զետեղված նյութը հերքում է նման եզրակացությունը, այդուհանդերձ շատ գայթակղիչ էր մնում այն ենթադրությունը, թե Խարբերդի ասորիների հայերեն խոսքում պահպանվել էին ինչ-ինչ ասորական բառեր կամ արտահայտություններ: Ձեռնամուխ լինելով «Բաբելոնի» ուսումնասիրմանը՝ մենք նույնպես ակնկալում էինք նրա լեզվի վերլուծության միջոցով ապացուցել Խարբերդի ասորիներին բնորոշ հայ-ասորական «Ժարգոնի» գոյությունը: Ըստ սկզբնական վարկածի, չունենալով գրական հայերենն օգտագործելուց բացի որևէ այլ ընդունելի տարբերակ, նվազագույնը, ինչ «Բաբելոնի» հրատարակիչները կարող էին անել լեզվական առումով, նրա ասորական էությունն ընդգծելու համար, պարբերականի լեզվի մեջ ասորիների կենդանի խոսքին բնորոշ և բոլորին հասկանալի «ասորիզմների» ներհյուսումն էր:

Այդուհանդերձ, «Բաբելոնի» մանրակրկիտ ուսումնասիրությամբ հանգում ենք այն եզրակացության, որ հայ-ասորական «ենթալեզու» Խարբերդում գոյություն չի ունեցել: Ասորիները թերևս գործածել են հայերին ոչ հասկանալի որոշ բառեր և արտահայտություններ, որոնք պայմանավորված են եղել հայկականից տարբեր եկեղեցական ավանդույթով (օրինակ՝ հայերեն «սարկավագ» բառի փոխարեն գործածել են ասորերեն/արաբերեն *շմմաս*-ը, Տերունական աղոթքն անվանել *Ապունտ պաշմայն* և այլն), սակայն այս կարգի լեզվական միավորների քանակը բավարար չէր կարող լինել, որպեսզի առիթ ունենայինք խոսելու ասորիների յուրահատուկ «ենթալեզվի» մասին: Ակնհայտ է, որ իրենց առօրյայի լեզվով ասորիները հայերից որևէ կերպ զանազանելի չեն եղել:

Այսպիսով, «Բաբելոնի» ասորական տարրերը մուտք են գործել նրա մեջ ոչ թե ասորիների խոսակցական լեզվի բնական ազդեցության հետևանքով, այլ ներմուծվել են արհեստականորեն: Պարբերականի ասորական էությունը լեզվի միջոցով ընդգծելու խնդիրն այս պարագայում ևս մնում է էական գործոն: Ոչ պակաս կարևոր գործոն պետք է դիտել կրթական նկատառումները: «Բաբելոնն» իր համեստ կարողությունների սահմաններում կարող էր ստանձնել իր ընթերցողներին ասորերենի տարրական իմացություն մատուցողի պարտականությունը, որը և ակնհայտորեն փորձել է անել:

Այսպիսով, «Բաբելոնը» տալիս է գրական հայերենի մեջ օտար բառեր գիտակցաբար, հստակ նպատակով ներհյուսելու եզակի օրինակ: Մեմական լեզուների, հատկապես արամեական բարբառների հետ հայերենի շփման և ներգոր-

ծության պատմության մեջ աա ինքնին բացատիկ մի երևույթ է:

Հավելված 1-ը ներկայացնում է «Բաբելոնում» արձանագրված ասորերեն բառերի ամբողջական ցանկ-կոնկորդանս, որը թույլ է տալիս «Բաբելոնի» համարներում հեշտությամբ գտնել հետաքրքրող ասորական բառերը:

Հավելված 2-ը ներկայացնում է «Բաբելոնի» կառուցվածքն ու ասորական լեզվանյութը համար առ համար:

Ատենախոսության թեմայով հրատարակված աշխատություններ

- “Babylon”, an Armenian-Language Syriac Periodical: Some Remarks on Milieu, Structure and Language, “Journal of the Canadian Society for Syriac Studies”, No. 10, 2010, Toronto, Canada, էջ 83-97:
- «Հայկական զարշունի»-ի՝ ասորատառ հայերենի մասին, «Արաբագիտական ուսումնասիրություններ», հատոր 7, Երևան, ԵՊՀ, 2014, էջ 8-29:
- Խարբերդի ասորիները Մեծ Եղեռնի նախաշեմին, «Արևելագիտության հարցեր», հատոր 9, Երևան, ԵՊՀ, 2015, էջ 6-40:

АКОПЯН АРМАН ЕГИШЕВИЧ

АРМЯНОЯЗЫЧНЫЙ АССИРИЙСКИЙ ЖУРНАЛ «ВАВИЛОН» КАК УНИКАЛЬНЫЙ ОБРАЗЕЦ АРМЯНО-СИРИЙСКОГО ЯЗЫКОВОГО СИМ- БИОЗА

Диссертация на соискание учёной степени кандидата филологических наук по специальности 10.02.06 «Древние и новые языки Азии».

Защита состоится 23-го июня 2016 г., в 15:00 часов, на заседании специализированного совета 019 ВАК по лингвистике, действующего при Институте языка им. Г.Ачаряна НАН РА, по адресу: 0015, г. Ереван, ул. Григор Лусаворич, 15.

РЕЗЮМЕ

Диссертация посвящена анализу армяноязычного журнала «Вавилон», издававшегося в 1919-1921 гг. в Бостоне (США) армяноязычными ассирийцами – выходцами из города Харберд в Западной Армении. В литературный армянский язык журнала инкорпорировано более 160-ти лексических единиц классического сирийского языка, что является единственным известным случаем записи сирийского языка армянским письмом.

Основной целью диссертации был поиск ответа на вопросы – каковы причины внедрения сирийского языкового материала в литературный армянский язык; являлось ли это своеобразным отражением предполагаемого специфического «жаргона» армяноязычных ассирийцев Харберда, характеризовавшегося наличием сирийских слов и выражений; каковы основные особенности передачи семитского языка (в данном случае – арамейского) посредством армянского алфавита.

Журнал «Вавилон», являющийся единственным неармянским периодическим изданием на армянском языке, не известен специалистам по истории армянской периодики и не фигурирует ни в одном из наиболее полных перечней армянских периодических изданий. Однако его внедрение в научный оборот важно не только с этой точки зрения, но и тем, что этот журнал является важнейшей составляющей духовно-интеллектуального наследия армяноязычных ассирийцев Харберда, «мир» которых был уничтожен в результате Геноцида армян 1915 г. На фоне той страшной национальной трагедии, которую ассирийский народ спустя сто лет после Геноцида снова переживает на своей исторической родине в результате беспрецедентного обострения исламского радикализма, сохранение и изучение всех проявлений его национальной культуры и мысли приобретает особое значение.

Структура диссертации. Диссертация состоит из введения, трёх глав, заключения, списка использованной литературы и источников и двух приложений.

В **введении** представлены своевременность и значение затронутых в работе тем, её структура, цель, основные поставленные вопросы, общий обзор использованной литературы, история изучения вопроса

Первая глава – «Национально-языковые истоки и среда “Вавилона” – содержит краткий очерк истории и конфессионального дробления арамейев/сирийцев/ассирийцев; обобщаются все известные данные о рукописях, в которых армян-

ский язык записан сирийским письмом, а также о возникновении первых общин армяноязычных ассирийцев в районе Харберда и Малатии; приводятся сведения о состоянии ассирийцев в Османской Империи и Иране в XIX в. На основе многочисленных источников в главе делается попытка визуализировать общину армяноязычных ассирийцев Харберда до Геноцида 1915 г., а также их эмигрантскую общину в США (штаты Массачусетс и Калифорния); в последнем случае широко используется материал, содержащийся в англоязычном журнале “Assyrian Progress”, который харбердские ассирийцы издавали в Калифорнии в 1930-ых годах. Особое внимание уделяется состоянию армянского языка в общине США в условиях смены поколений и притока новых эмигрантов из Ближнего Востока.

Вторая глава – «Структура “Вавилона”» – представляет основные компоненты журнала, а именно – титулы и титульные листы, передовицы, официальные и прочие сообщения, письма, объявления, реклама, постоянные разделы *Мавтуну-то тасурой* и *Мэн эллэл – мэн элко*.

Третья глава – «Языковые особенности “Вавилона”» – содержит лингвистический анализ издания. Приводится характеристика армянского языка журнала, который в целом является литературным западноармянским хорошего качества, с некоторым влиянием разговорного языка в отдельных статьях, но без каких-либо образцов харбердского диалекта. Некоторые статьи написаны на восточноармянском языке, с эпизодическим влиянием западного; это в основном касается статей, принадлежащих перу второго редактора «Вавилона» Наума Бешарова, язык которого претерпел изменения в результате долгого проживания на Кавказе.

Далее приводится подробный анализ сирийского языкового материала. Представляются издававшиеся в журнале армяно-сирийские словники, а также особенности подачи сирийских слов вне таковых. Анализируются система передачи звуков семитского языка посредством армянского алфавита (группа интердентальных согласных *бегад-кепат*, гортанные согласные и *шва*, эмфатические согласные, метатеза *шва*) и особенности морфологической и синтаксической абсорбции сирийских слов армянским языком. Сирийский языковой материал отдельно рассматривается по частям речи (существительные, прилагательные, глаголы, числительные, местоимения) и по тематическим группам. В отдельных подразделах рассмотрены случаи использования в журнале сирийского письма и некоторые сирийские языковые элементы в нескольких статьях, написанных сирийским письмом на османско-турецком языке.

В **заключении** диссертации обобщены и изложены основные результаты работы. В **приложении 1** представлен конкорданс фигурируемых в «Вавилоне» сирийских языковых элементов, в **приложении 2** – структура журнала и сирийские языковые элементы по номерам.

ARMAN AKOPIAN

**BABYLON, AN ARMENIAN-LANGUAGE ASSYRIAN PERIODICAL
AS A UNIQUE EXAMPLE OF ARMENIAN-SYRIAC LINGUISTIC SYMBIOSIS**

Dissertation for the degree of candidate of philological sciences, specialty 10.02.06 – “Ancient and Modern Languages of Asia”

The defense will take place on June 23, 2016, 15:00, at the session of the Specialized Council on Linguistics 019 HAC (Higher Attestation Commission) in the Hrachya Acharyan Institute of Language of the National Academy of Sciences of the Republic of Armenia (0015, Yerevan, 15 Grigor Lusavorich street)

SUMMARY

The dissertation contains analysis of the Armenian-language *Babylon* Assyrian periodical published in Boston (USA) in 1919-1921 by Armenian-speaking Assyrians of Kharberd, a city in Western Armenia. The Standard Armenian of the journal contains more than 160 lexical units of Classical Syriac, which provides the only known example of Syriac written in Armenian script.

The main goal of the dissertation was to find answers to the following questions: what are the reasons for the inclusion of Syriac elements in the literary Armenian language; was this the influence of a possible Armenian-Assyrian “slang” which might include Syriac words and expressions; what are the main principles of rendering a Semitic language (in this case – Aramaic) by the means of the Armenian alphabet?

Babylon, which is the only non-Armenian periodical published in the Armenian language, is unknown to the scholars of the history of the Armenian press, and is not to be found in any of the major listings of Armenian periodicals. But bringing it into the spotlight of science is important not only for this reason, but also because it is a most valuable part of the cultural and intellectual heritage of the Kharberd Assyrians, whose “world” has been destroyed as a result of the Armenian Genocide of 1915. The terrible national tragedy that the Assyrian people experiences again in its own homeland because of the unprecedented rise of Islamic radicalism, one hundred years after the Genocide, gives a very special meaning and significance to the task of studying and preserving all manifestations of Assyrian heritage.

The structure of the dissertation. The dissertation contains an introduction, three chapters, a conclusion, a bibliography and two addenda.

The **introduction** addresses the timeliness and relevance of the topic, the structure, objectives and main statements of the research, general survey of bibliography and sources, history of the research of the topic.

The first chapter entitled “The ethnic and linguistic background and milieu of *Babylon*”, contains a brief survey of the history and confessional divisions of the Aramean/Syriac/Assyrian people, summarizes all known data on the Armenian-language texts written in Syriac script, as well as on the formation of the first communities of Armenian-speaking Assyrians in the region between Kharberd and Malatya, presents information relevant to the subject of Assyrians in the Ottoman Empire and Iran in the 19th century. On the basis of several sources the chapter attempts to visualize the Assyrian community of Kharberd prior to the 1915 Genocide, as well as their expatriate community in the United States (Massachusetts and California). In the case of the US community the dissertation widely uses the material contained in *Assyrian Progress*, an Eng-

lish-language periodical published by the Kharberd Assyrians in California in the 1930s. Special attention is given to the status of the Armenian language in the US community under the generational changes and arrival of new immigrants from the Middle East.

The second chapter entitled “The Structure of *Babylon*”, discusses the main components of the periodical, namely its titles and title pages, editorials, official and other reports, letters and communications, announcements, advertisements, permanent sections *Mavtonuto tasuroyo* and *Men ellel – men elko*.

The third chapter entitled “Linguistic features of *Babylon*”, contains the linguistic analysis of the periodical. First, it briefly addresses the Armenian language, which in *Babylon* is mainly Western Armenian of good quality, with minor influences of vernacular in some articles, but without any traces of the Kharberd dialect. Several articles are written in Eastern Armenian with some minor Western Armenian influences; those belong to the second editor of *Babylon*, Naum Besharov, whose language shifted from Western to Eastern Armenian because of the many years he had spent in the Caucasus.

The dissertation then proceeds to discuss the Syriac elements. The Armenian-Syriac glosses are presented, as well as the ways of including Syriac units out of glosses. The system of reflecting the phonology of a Semitic language through Armenian script is analyzed in detail (the *begad-kepat* group of interdental consonants, the gutturals and *schwa*, emphatic consonants, the *schwa* metathesis), as well as the morphological and syntactical absorption of Syriac elements by the Armenian language. Syriac lexical material is classified and discussed by parts of speech (nouns, adjectives, verbs, numerals, pronouns), and by thematic groups. Subchapters address the occasional use of Syriac script and Syriac elements in several articles written in Ottoman Turkish in Syriac script.

The **conclusion** summarizes and presents the main findings of the dissertation.

Addendum 1 contains concordance of all Syriac elements in *Babylon*, **addendum 2** – the structure of the periodical and Syriac elements issue by issue.